Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեքից հինգ կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատաժամային ծրագրում սահմանված է 48 կրեդիտ: Մա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

1. Մագիստրոսական ծրագիր՝ «Հայոց լեզու և գրականություն»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/վ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
19/M02	Հայոց լեզվի տեսություն	4	32/0/0	I	Քննություն
19/M03	Գրականության տեսություն	4	32/0/0	I	Քննություն
19/M04	Հայ ժողովրդական բանասիրություն	4	32/0/0	I	Քննություն
19/M05	Արտասահմանյան գրականություն/20-րդ դարի 1- ին կես/	3	32/0/0	I	Քննություն
19/M06	Հայ գրականության չրջափուլերը	3	32/0/0	II	Քննություն
19/M07	Արտասահմանյան գրականություն /20-րդ դ.2-րդ կես, 21-րդ դ սկիզբ/	3	32/0/0	II	Քննություն
19/M08	Հայ հին և միջնադարյան գրականության զարգացման առանձնահատկությունները	3	32/0/0	II I	Քննություն
19/M09	Հայ նոր գրականության զարգացման առանձնահատ.	3	32/0/0	II	Քննություն
19/M10	Հայ նոր գրականության զար- գացման առանձնահատկու- թյունները 20-րդ դ 2-րդ կեսին	3	32/0/0	III	Քննություն

19/M11	Ժամանակակից գրական գործընթացներ	4	32/0/0	III	Քննություն
19/M13	Թարգմանչական տեսություն	3	32/0/0	III	Քննություն
19/M14	XX-րդ դարասկզբի արևմտահայ պոեզիա	4	32/0/0	III	Քննություն
19/M16	Նորագույն շրջանի գրականության զարգացման առանձնահատկությունները	4	32/0/0	III	Քննություն
19/M20	Հայերենի քերականության պատմություն	3	32/0/0	II	Քննություն

Կամրնտրական դասընթացներ

Կամրնտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավար ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2-4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամրնտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևավար պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամրնտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

1. Մագիստրոսական ծրագիր՝

«Հայոց լեզու և գրականություն»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
19/M01	Հանրալեզվաբանության հիմունքներ	3	32/0/0	III	Քննություն
19/M12	Հայ պատմավիպասանություն	3	32/0/0	II	Քննություն
19/M17	Ժամանակակից հայերենի տիպաբանությունը	3	32/0/0	II	Քննություն
19/M18	Տեքստաբանություն	3	32/0/0	I	Քննություն
19/M19	Հայ գրական մամուլը 19-րդ դարի երկրորդ կեսին	3	32/0/0	II	Քննություն

19/M21	XX-րդ դարի գրական ուղղությունները	3	32/0/0	III	Քննություն
--------	-----------------------------------	---	--------	-----	------------

2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա** և **մագիստրոսական թեզ**:

Գիտական սեմինարը ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4 կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատաժամակով:

Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաժամակ:

Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաժամակ:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատաժամակ:

Մաս II.
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. Տեղեկագրքի նպատակը

Պասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհիվ ողորկավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը և այլն,

- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

05/M08. Համակարգչագիտություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին հաղորդել գիտելիքներ ժամանակակից ինֆորմատիկայի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման մասին, որի հետևանքով ուսանողը կկարողանա ավելի խորը հետազոտությունները կատարել իր ոլորտում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

1.1. Անհատական համակարգչի արտաքին և ներքին կառուցվածքները նաև ներքին սարքավորումների նպատակը:

1.2. Ուտիլիտային ծրագրեր (paint, snapping tool, cleanup defragment և այլն)

1.3. ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները:

1.4. Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր:

2. **կհասկանա** TCP/IP արձանագրության համառոտ նկարագրությունը, արձանագրության նպատակը լոկալ և գլոբալ ցանցերում, հաշվողական ցանցերի դասակարգում, լոկալ ցանցերի տոպոլոգիա:

3. **կկարողանա կատարել** Windows XP, 7 օպերացիոն համակարգերի հիմնական տարրերի հետ աշխատանք: Բնութենետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ:

Օգտագործել MS Office հիմնական ծրագրերից՝

3.1 **MS Office Power Point** ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում, դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

3.2 **MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում՝** բանաձևերի մուտքագրում, գրաֆիկների կառուցում ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում:

3.3 **MS Office Word տեքստային խմբագրիչում՝** տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում, և ձևավորում:

Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ (մասնավորապես՝ ներմուծել **MS Office Excel** աղյուսակը **MS Office Word**) MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստեր և ռեֆերատների պատրաստում:

Հոդվածներում, ռեֆերատներում հղումների ստանդարտների հետ աշխատել՝ մասնավորապես, IEEE 2006, ГОСТ(сортировка по именам) ГОСТ(сортировка по

названиям) և այլն այլ ստանդարտներով աշխատել ինչպես նաև *Բովանդակություն* է կազմել՝ օգտագործելով **MS Office Word** հրամաններից:

Բովանդակությունը

ԲԱԺԻՆ I

Թեմա 1՝ Համակարգչային ծրագրային ապահովման նկարագրում:

Ծրագրերը համակարգիչների և տեղեկատվական տեխնոլոգիաների անբաժանելի մասն է: Նկարագրվում են ծրագրային ապահովման հիմնական հասկացությունները, ծրագրային արտադրանքի հասկացությունը: Դիտարկվում է ծրագրային ապահովման դասակարգումը: Նկարագրվում են կիրառական ծրագրերը, գործիք ծրագրային համակարգերը և օպերացիոն համակարգերը: Ուսումնասիրվում է WINDOWS օպերացիոն համակարգի ղեկավարման վահանակը: Դիտարկվում է մկնիկի և ստեղնաշարի աշխատանքի հատկությունների փոփոխումը: Ուսումնասիրվում է Regional and Language Options: Նկարագրվում են տառատեսակները (Fonts): **Թեմա 2՝** Աշխատանք File և Folder-ի հետ: Տրվում են կրիչների նկարագրումը, File և Folder-ի սահմանումները ու նրանց չափման միավորները: Ուսումնասիրվում են File և Folder-ի ատրիբուտները (Read-Only, Hidden, System, Archiv): Բացատրվում է File-ի ճանապարհը: Ուսումնասիրվում են File և Folder-ի հետ գործողությունները (Copy, Move, Rename, Delete): Առանձին ուշադրություն է դարձվում կրիչների վրա գրված File կամ Folder-ի փնտրման ձևին: Բացատրվում է Shorcut հասկացությունը: Նկարագրվում են WINDOWS միջավայրում օգտագործվող տաք ստեղները: Ուսումնասիրվում է Folder-ները և Printer-ները լրկալ ցանցում: Մասնավորապես դիտարկվում է Sharing հրամանը:

ԲԱԺԻՆ II

Microsoft Office

Թեմա 3՝ Microsoft Word: Ուսումնասիրվում են տաք ստեղների օգտագործումը տեքստի հետ աշխատելու ժամանակ: Դիտարկվում է պատրաստի ձևերի օգտագործումը նոր File ստեղծելու ժամանակ: Բացատրվում է Բովանդակության կազմման ձևը: Տեքստի տպելու տարբերակները: Դիտարկվում է աշխատանք ցուցակների հետ: Թռուցկադիտում: Ուսումնասիրվում են աղյուսակների կազմում, խմբագրական այլ աշխատանքներ; մուտքագրված տեքստի փոխակերպումը ChangeCase գործառույթի առաջարկված առկա տարբերակներով; մուտքագրված տեքստի նշված հատվածի տառատեսակի և չափի փոփոխություն; տեքստի փոխակերպումը ցուցչային և աստիճանային տեսքի; համարակալում; տողերի միջև հեռավորության կարգավորում; պարբերության տեսակների կարգավորում; էջի պարամետրերի և դիրքի կարգավորում; էջի և բաժնի ընդհատում; էջի ֆոնի կարգավորում, ջրանիշներ (watermark); փաստաթղթի դիտարկման ռեժիմ; փաստաթղթի տպագրում; փաստաթղթի էջերի համարակալում և տիտղոսաթերթ; աշխատանք Header և Footer-ի հետ; հղումներ, խաչաձև հղումներ; աշխատանք աղյուսակների հետ; գրաֆիկական օբյեկտների ներմուծում; գրաֆիկական օբյեկտների ֆորմատավորում; աշխատանք ClipArt-ի հետ; աշխատանք Word Art-ի օբյեկտների հետ; ֆայլերի ընդլայնում; փնտրում և փոխարինում գործառույթները; սիմվոլների ներմուծում MS; աշխատանք բանաձևերի հետ; դաշտերի

օգտագործում: **Թեմա 4՝** Power Point: Ուսումնասիրվում են էլեկտրոնային ցուցադրումների ծրագրի դերն ու նշանակությունը; տեղեկատվության ներկայացման առավելությունները MS Power Point միջավայրում; աշխատանքային միջավայրի նկարագրություն; MS Power Point ծրագրի հնարավորությունները; այլ ծրագրերից ներմուծվող ռեսուրսները (տեքստ, դիագրամ, պատկերներ, սլայդ-ֆիլմեր, ձայներ, գրաֆիկա); շնորհանդեսի ստեղծում; դրվագների հետ աշխատանք; շնորհանդեսի տարբեր տեսադաշտեր (view) Normal, Outline, Slide Sorter, Slide Show և Print; տեքստի ֆորմատավորում, նկարների տեղադրում, ֆոնային գույնի և պատկերների տեղադրում, փոփոխում; MS Word-ի օբյեկտների տեղադրում MS Power Point; անիմացիայի կիրառումը օբյեկտների համար; ձայնային էֆեկտների կարգավորում; աշխատանք նշան-կոճակների (Symbol) հետ; շնորհանդեսի ներկայացում: **Թեմա 5՝** MS Excel: Ուսումնասիրվում են փաստաթղթի անվանումը, ընդլայնումը, փաստաթղթի կառուցվածքը; փաստաթղթի տպագրում; մուտքագրվող տվյալների ստուգում MS Excel-ում; աղյուսակներում տեսակավորում, աշխատանք դիագրամների հետ և խմբագրում MS Excel -ում:

ԲԱԺԻՆ III

Տեղեկատվական անվտանգություն: INTERNET

Թեմա 6 Տեղեկատվական անվտանգություն: Տեղեկատվական անվտանգությունը չի հանդեսանում տեղեկատվության և համակարգչային համակարգերի անվտանգության երաշխիք: Նկարագրվում է տեղեկատվական պատերազմի հատկանիշները: Նկարագրվում են տեղեկատվական զենքը: Ուսումնասիրվում է տեղեկատվական անվտանգության դասակարգումը կախված տեղեկատվական համակարգերում կիրառման ձևերից: Դիտարկվում է սպառնալիքների դասակարգումը և հնարավոր պաշտպանական միջոցները: Նկարագրվում են վիրուսների և հակավիրուսային ծրագրերի դասակարգումը և աշխատանքը:

Թեմա 7՝ INTERNET: Գաղտնիության Քաղաքականություն: Նկարագրվում են ինտերնետ բրաուզերները՝ Opera, Chrome, Orbitum, Firefox, Яндекс Браузер, Internet Explorer, Safari, Chromium, Амиго, К-Meleon, Uran, նրանց դրական և բացասական կողմերը: Ուսումնասիրվում են նրանց հիմնական հրամանները, տեղեկատվության փնտրումն համացանցում: Դիտարկվում է Գաղտնիության Քաղաքականությունը, որն տարածվում է բոլոր այն այցելուների, օգտատերերի և այլոց (այսուհետ՝ “Յուրաքանչյուր”, “Օգտատեր”, “Դուք” կամ “Ձեր”) վրա, ովքեր նման ծառայություններից օգտվելու իրավունք ունենք: Սույն Գաղտնիության Քաղաքականությունը կարգավորում է **Error! Hyperlink reference not valid.**, www.rostelecomarmenia.am կայքերի (“այսուհետ՝ “Կայք”) օգտատերերից ստացված տեղեկատվության հավաքագրման, կիրառման, պահպանման և բացահայտման եղանակները: Խոսվում է անձնական տվյալների, ոչ անձնական բնույթի տվյալների, ինտերնետային բրաուզերի քուքիներ, հավաքագրված տեղեկությունների կիրառման եղանակները, օգտատերերի տվյալների պահպանման եղանակները, օգտատիրոջ անձնական տվյալների տարածում,

ինտերակտիվ կապ սոցիալական ցանցերի հետ, մտավոր սեփականության և հեղինակային իրավունքների պաշտպանում, երեխաների մասին տվյալների գաղտնիություն, գործող օրենք և իրավասություն, սույն պայմանների ընդունումը, հետադարձ կապ, գաղտնիության քաղաքականության փոփոխություն մասին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է մագիստրանտի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

07/M04. Խոսքի մշակույթ (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է գրական հայերենի ընդհանուր օրինաչափությունների, գրական լեզվի նորմերի և դրանց ճիշտ կիրարկության իմացությունը, հայերենի ոճերի իմացությունը, հասարակության լայն շրջանակներում գրական խոսքի բարձր ճաշակ մշակելը, խոսքի արժանիքների և թերությունների ուսումնասիրումը, խոսքի մշակույթի վարպետների թողած ժառանգության ծանոթացումը և այլն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1.կիմանա

- հայերենի իրադրական ոճերը,
- հայերենի գործառական ոճերը,
- անհատական /հեղինակային/ ոճերը,
- լեզվական նորմերը հայերենում,
- գրական նորմերը հայերենում,
- ոճական նորմերը հայերենում,
- բառապաշարի ձևաիմաստային խմբերը,
- բառապաշարի շերտերն ու դրանց ոճական բնութագրերը,
- խոսքի արտահայտչական միջոցները,
- խոսքի պատկերավորման միջոցները,
- խոսքի արժանիքները,
- խոսքի թերությունները

խոսքի ճիշտ կառուցման ոճական հնարավորությունները:

2.կկարողանա

- **իրականացնել**
 - իրադրական, գործառական և անհատական ոճերի համեմատական վերլուծություն,
 - խոսքի թերությունների համեմատական քննություն,

- խոսքի արժանիքների համեմատական քննություն,

3. բնութագրել և տարբերակել

- իրադրական /վարչագործարարական, երգիծական, ծաղրական, հանդիսավոր-վերամբարձ, պաշտոնական և այլն/ ոճերը,
- գործառական /գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, առօրյա-խոսակցական և գեղարվեստական/ ոճերը,
- անհատական /հեղինակային/ ոճերը
- բառապաշարի իմաստաձևային խմբերը,

4. մեկնաբանել

- լեզվական նորմերի և կիրարկության հարաբերությունը,
- լեզվական և ոճական նորմերի բնութագրերը,
- խոսքը գեղեցիկ և ճիշտ կառուցելու հնարավորությունները,
 - a. ուսումնասիրել և հետազոտել՝
 - իրադրական ոճերի օրինակներ,
 - գործառական ոճերի օրինակներ,
 - անհատական-հեղինակային ոճի օրինակներ,
 - լեզվական նորմերից կատարվող շեղումների օրինակներ,
 - ոճական նորմերի օրինակներ,
 - խոսքի թերությունները,
 - խոսքի արժանիքները,
 - խոսքի պատկերավորման և արտահայտչականության միջոցները,
 - լեզվական սխալ ձևերի կիրառությունը խոսքում:
 - b. բացահայտել՝
 - հայերենի իրադրական, գործառական ոճերի ոճակագրական հնարավորությունները,
 - լեզվական նորմերը և դրանց գործառույթները,
 - ոճական նորմերը և դրանց գործառույթները,
 - լեզվական նորմերից կատարվող սխալները հայերենում,
 - ռուսերենի և անգլերենի ազդեցությամբ եկած սխալները լեզվում,
 - հստակ տարբերակել բառային, քերականական և շարահյուսական օտարաբանությունները լեզվում,
 - c. կիրառել՝ ոճաբանության տեսական մոդելները:

5. կտիրապետի

- խոսքի մշակույթի արդի հիմնախնդիրներին,
- իրադրական, գործառական և անհատական ոճերին և կիմանա ինչպես և որտեղ կիրառել դրանցից յուրաքանչյուրը,
- բառապաշարային շերտերի ոճական հնարավորություններին,
- խոսքը ճիշտ կառուցելու տեխնիկային,
- խոսքի արժանիքներին,
- խոսքի պատկերավորման և արտահայտչականության միջոցներին:

Բովանդակությունը.

Ներածություն

Խոսքի մշակույթ առարկայի մասին ընդհանուր պատկերացում, ուսումնասիրության ոլորտը, խնդիրներն ու նպատակները, առնչությունները լեզվաբանությունը և հարակից ու ոչ հարակից գիտություններին և արվեստի ճյուղերին, խոսքի ուսումնասիրության պատմության համառոտ ակնարկ:

Թեմա 1՝ Լեզու և խոսք, ոճ և ոճույթ: Լեզվի և խոսքի հարաբերակցությունը՝ որպես ընդհանուրի և մասնավորի, համակարգի և այդ համակարգի իրացման, լեզվական նորմերի և կիրարկության հարաբերություն: Ոճ և ոճույթ հասկացությունները: **Թեմա 2**՝ Լեզվական և ոճական նորմեր: Լեզվի նորմավորում, լեզվական նորմերը, գրական նորմերը և ոճական նորմերը հայերենում: Լեզվագործածություն և նորմ հարաբերությունը: Լեզվական նորմերի տեսակները. ուղղախոսական, ուղղագրական, բառային, քերականական և շարահյուսական նորմեր: **Թեմա 3**՝ Ոճերի դասակարգումը. իրադրական ոճեր: Ոճերի դասակարգման սկզբունքները համաշխարհային և հայ լեզվաբանության մեջ: Իրադրական, գործառական և անհատական ոճեր: Իրադրական ոճերը հայերենում, տեսակները, գործածության ոլորտները: **Թեմա 4**՝ Գործառական ոճեր հայերենում: Գիտական ոճ: Գեղարվեստական ոճ: Գործառական ոճերի դասակարգման ընդունված սկզբունքները, տեսակները: Գիտական ոճը հայերենում. առանձնահատկությունները, կիրառության ոլորտները, դրսևորումները, գիտական ոճի բառապաշարը և քերականական կառուցվածքը: Գեղարվեստական ոճի առանձնահատկությունները, ընդհանուր հատկանիշները, կիրառության ոլորտները, բառապաշարը և քերականական համակարգը հայերենում: Գեղարվեստական ոճի օրինակների քննություն: **Թեմա 5**՝ Պաշտոնական կամ վարչագործարարական ոճ: Պաշտոնական ոճի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, կիրառության ոլորտները, բառապաշարը, քերականական համակարգը: Պաշտոնական ոճի նմուշների ուսումնասիրություն: **Թեմա 6**՝ Հրապարակախոսական ոճ: Հրապարակախոսության լեզվաոճական առանձնահատկությունները, կիրառության և ազդեցության ոլորտները, դրսևորման ձևերը, բառապաշարը, քերականական կառուցվածքը: ՋԼՄ-ի լեզուն, դաստիարակչական հաղորդումների լեզվաոճական խնդիրներն այսօր: Հրապարակախոսական ոճի օրինակների քննություն: **Թեմա 7**՝ Առօրյա-խոսակցական ոճ: Ժողովրդախոսակցական և գրական-խոսակցական ոճերը՝ որպես առօրյա-խոսակցական ոճի տարբերակային ձևեր: Առօրյա-խոսակցական ոճի ընդհանուր հատկանիշները, կիրառության ոլորտները, դրսևորման ձևերը, բառապաշարային և քերականական համակարգի ընդհանուր առանձնահատկությունները: Առօրյա-խոսակցական ոճի չարաշահման դեպքերի քննություն: Առօրյա-խոսակցական ոճի բառապաշարի և քերականական համակարգի քննություն: Փոխառությունները և օտարաբանությունները, ժարգոնային բառերը և գոեհկաբանությունները, բարբառային բառերն ու հասարակաբանությունները՝ որպես առօրյա-խոսակցական ոճի դրսևորումներ: **Թեմա 8**՝ Բառապաշարի շերտերը և նրանց ոճական բնութագրերը: Բառապաշարի իմաստաձևային խմբերը հայերենում, դրանց ոճական կիրառությունները: Ակտիվ և պասիվ բառապաշարային շերտերը: Համագործածական կամ միջոճական բառեր: Հնաբանությունները. տեսակները, նրանց ոճական արժեքը: Նորաբանություններ և դիպվածային /օկագիռնալ/ բառեր. տեսակները, նրանց ոճական արժեքը, կիրառության ոլորտները: Նորաբանություններ և նորակազմություններ, նրանց դերը խոսքում: Հայերենի հոմանիշները. տեսակները, գործածության ոլորտները, ոճական արժեքը:

Բառային և շարահյուսական հոմանիշության կիրառումը լեզվում՝ որպես խոսքի բարձր մշակույթի դրսևորում: Հականիշներ. տեսակները, գործածության ոլորտները: Համանուն և հարանուն բառերի գործածությունը: Համահունչ բառերի գործածությունը: Բաղաձայնային, առձայնային:

Թեմա՝ 9 Դարձվածաբանություն: Խոսքային բանաձևեր: Պատրաստի խոսքեր: Խոսքում դարձվածների կիրառումը՝ որպես խոսքի պատկերավորության դրսևորում, դրանց ոճական արժեքը: Տեսակները, գործածության ոլորտները: Դարձվածքների ոճական հնարավորությունները և բնութագիրը: Միջազգային և հայկական դարձվածներ, կիրառության հնարավորությունները խոսքում:

Ասացվածքներ, կարճաբանություններ, առածներ, խրատներ, թևավոր արտահայտություններ, ասույթներ, իմաստություններ, համառոտ առակներ, անեկդոտներ, խրատապատում, սրանց կիրառությունը և ոճական արժեքը խոսքում: **Թեմա 10՝** Լեզվի պատկերավորման միջոցները և դրանց կիրառությունը խոսքում:

Այլաբերություն. կեսակները, ոճական արժեքը: Մակդիր: Համեմատություն: Փոխաբերություն. կեսակները, ոճական հնարավորություններն ու արժեքը: Անձնավորում: Շրջասություն /շրջասույթ/: Խորհրդանշան /սիմվոլ/: Ակնարկ: Այլաբերություն /ալեգորիա/: Չափազանցություն և նվազաբերություն: Փոխանունություն: **Թեմա 11՝** Լեզվի արտահայտչական միջոցները և դրանց կիրառությունը խոսքում:

Ճարտասանական դարձույթներ /ճարտասանական հարց, ճարտասանական դիքում, ճարտասանական բացականչություն/, նրանց ոճական արժեքը և կիրառության ոլորտները: Կրկնություններ. կեսակները, ոճական արժեքը: Աստիճանավորում: Շրջադասություն: Խոսքի ընդհատում և զեղչում: Հակադրություն: Բնանկար, դիմանկար. նրանց ոճական արժեքը: **Թեմա 12՝** Խոսքի արժանիքները:

Գաղափարական հագեցվածություն, տեղեկության կարևորություն, արժեքավորություն և նորություն, հաղորդման ինքնատիպություն: Լեզվական միջոցների հարստություն և բազմազանություն: Հակիրճություն: Ճշտություն: Հասկանալիություն կամ պարզություն: Տրամաբանականություն: Պատկերավորություն և արտահայտչականություն: Համապատասխանություն և բնականություն: Նրբագեղություն: Ուժ և դինամիզմ: Համաչափություն, համամասնություն և ներդաշնակություն: Առարկայականություն:

Թեմա 13՝ Խոսքի թերությունները: Ոճական ավելադրություն: Թարմատար: Անհետևողականություն: Ժամանակավրիպություն: Օտարաբանություն: Ոճի անհամապատասխանություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման

վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/M01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն) (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Մասնագիտական օտար լեզու դասընթացի նպատակն է մագիստրոսներին ծանոթացնել անգլերեն լեզվի հենքային քերականական կառույցներին, տալ օտար լեզվով մասնագիտական գիտելիքներ, ընդլայնել բառապաշարը, ամրապնդել տեքստերի իմաստային ընկալումը, ուսանողների մոտ զարգացնել լեզվական, լսողական, ազատ հաղորդակցման հմտություններ: Աշխատանքը օտար լեզվի դասերին հիմնականում ուղղված է մասնագիտական բառապաշարի հարստացմանն ու խոսքային հաղորդակցության հմտությունների զարգացմանը: Սա իրագործվում է թեմատիկ տեքստերի, բառապաշարի յուրացմանը նպաստող վարժությունների, երկխոսությունների, իրադրային բանավեճերի, ինչպես նաև թարգմանական վարժությունների միջոցով:

Կրթական արդյունքները

1.կիմանա

խոսակցական-տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք ուսանողներին կօգնեն զարգացնելու անգլերեն լեզվով մասնագիտական տեքստերն ընկալելու, վերարտադրելու և մեկնաբանելու հմտությունները, ընտրել համապատասխան բառապաշար՝ տվյալ նյութի շուրջ քննարկումներ, պրեզենտացիաներ անելու համար,

2.կկարողանա մասնագիտական բառարաններ և ձեռնարկներ՝ նպաստելու համար մասնագիտական տեքստերի վրա ինքնուրույն աշխատելուն /թարգմանություն, նյութի մշակում/:

3.կտիրապետի Անհրաժեշտ գրականություն՝ նպաստելու համար լեզվական գիտելիքների խորացմանը,

Բովանդակությունը

Թեմա 1՝ Grammar: Present Simple, Present Continuous, Stative Verbs

Topic Vocabulary- Fun and Games

Phrasal Verbs. Additional Grammatical Exercises. Անորոշ ներկա, ներկա շարունակական ժամանակաձևերը անգլերենում, դրանց տարբերությունը, քերականական վարժություններ:

Բառապաշարի ուսումնասիրություն, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար: **Թեմա 2՝** Grammar: Past Simple, Past Continuous, used to Topic Vocabulary- Fun and Games

Prepositional Phrases, Word Formation, Word Patterns. Անցյալ անորոշ, անցյալ շարունակական ժամանակաձևերը անգլերենում, դրանց տարբերությունը, քերականական վարժություններ:

Բառապաշարի ուսումնասիրություն, անցած նյութի ստուգում : **Թեմա 3՝** Grammar: Present Perfect Simple, Present Perfect Continuous. Topic Vocabulary- Learning and Doing. Phrasal Verbs, exercises Վաղակատար ներկա, վաղակատար շարունակական ներկա ժամանակաձևերը անգլերենում, դրանց տարբերությունը, քերականական վարժություններ:

Հարադրավոր բայերի ուսումնասիրություն, վարժություններ: **Թեմա 4՝** Grammar: Past Perfect Simple, Past Perfect Continuous Topic Vocabulary- Learning and Doing

Prepositional Phrases, Word Formation, Word Patterns

Վաղակատար անցյալ, վաղակատար շարունակական անցյալ ժամանակաձևերը անգլերենում, դրանց տարբերությունը, քերականական վարժություններ: Բառապաշարի ուսումնասիրություն, անցած նյութի ստուգում : **Թեմա 5**՝ Grammar: Future Time (present continuous, will, be going to, present simple) Topic Vocabulary-Coming and Going

Phrasal Verbs, exercises Ապառնի ժամանակաձևերը անգլերենում, դրանց տարբերությունը, քերականական վարժություններ: Բառապաշարի ուսումնասիրություն, հարադրավոր բայերի ուսումնասիրություն, վարժություններ: **Թեմա 6**՝ Grammar: Prepositions of Time and Place. Topic Vocabulary-Coming and Going. Prepositional Phrases, Word Formation, Word Patterns Ժամանակի և տեղի նախդիրները անգլերենում, քերականական վարժություններ: Բառապաշարի ուսումնասիրություն, բառակազմություն, անցած նյութի ստուգում :

Թեմա 7՝ գիտելիքների ստուգում Test **Թեմա 8**՝ Presentation. **Թեմա 9**՝ Grammar: The Passive 1 Topic Vocabulary- Friends and Relations Phrasal Verbs, exercises Կրավորական սեռը անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար: Բառապաշարի ուսումնասիրություն, հարադրավոր բայերի ուսումնասիրություն, վարժություններ: **Թեմա 10**՝ Grammar: The Passive 2 Topic Vocabulary- Friends and Relations Prepositional Phrases, Word Formation, Word Patterns. Review 4 Կրավորական սեռը անգլերենում, Բառապաշարի ուսումնասիրություն, բառակազմություն, անցած նյութի ստուգում տեստի միջոցով: **Թեմա 11**՝ Grammar: Countable and Uncountable Nouns. Topic Vocabulary- Buying and Selling. Phrasal Verbs, exercises Հաշվելի և անհաշվելի գոյականները անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար: Բառապաշարի ուսումնասիրություն, հարադրավոր բայերի ուսումնասիրություն, վարժություններ: **Թեմա 12**՝ Grammar: Articles Topic Vocabulary-Buying and Selling Prepositional Phrases, Word Formation, Word Patterns Review 5

Անորոշ և որոշիչ հոդը անգլերենում, հոդի օգտագործումը աշխարհագրական անունների հետ, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար:

Բառապաշարի ուսումնասիրություն, բառակազմություն, անցած նյութի ստուգում տեստի միջոցով: **Թեմա 13**՝ Grammar: Pronouns and possessive determiners. Topic Vocabulary- Inventions and Discoveries. Phrasal Verbs, exercises. Անձնական և ստացական դերանունները անգլերենում,

Բառապաշարի ուսումնասիրություն, հարադրավոր բայերի ուսումնասիրություն, վարժություններ: **Թեմա 14**՝ Grammar: Relative Clauses Topic Vocabulary- Inventions and Discoveries Prepositional Phrases, Word Formation, Word Patterns Review 6 Որոշիչ երկրորդական նախադասությունները անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար:

Բառապաշարի ուսումնասիրություն, բառակազմություն, անցած նյութի ստուգում տեստի միջոցով: **Թեմա 15**՝ Individual Reading **Թեմա 16**՝.Final Test. **Թեմա 17**՝ Grammar: Modals 1 ability ,permission, advice. Linguistics: A Brief Survey. Topic Vocabulary- Sending and Receiving. Listening-The Difference Between Language and Linguistics Մոդալ բայերը անգլերենում 1, դրանց տարբերությունը, քերականական վարժություններ: Տեքստի ընթերցում, թարգմանում, մասնագիտական տերմինների, բառերի և արտահայտությունների ուսումնասիրություն: **Թեմա 18**՝ Grammar: Modals 2 obligation, probability, possibility. Ferdinand de Saussure Prepositional Phrases, Word Formation, Word Patterns. Մոդալ բայերը անգլերենում 1,

դրանց տարբերությունը, քերականական վարժություններ: Նյութի ընթերցում, թարգմանում, մասնագիտական բառապաշարի ուսումնասիրություն:

Թեմա 19' Modals 3 the modal perfect Linguistics Today Topic Vocabulary- People and Daily Life. Մոդալ վաղակատար, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար:

Տեքստի ընթերցում, թարգմանում, մասնագիտական տերմինների, բառերի և արտահայտությունների ուսումնասիրություն: **Թեմա 20**' Grammar: Questions, question tags, indirect questions. Literature should have adequate Nuance and Gradation. Prepositional Phrases, Word Formation, Word Patterns. Հարցերի տեսակները անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար: Տեքստի ընթերցում, թարգմանում, քննարկում: Բառապաշարի ուսումնասիրություն, բառակազմություն: **Թեմա 21**' Grammar: So and such, too and enough Vocabulary in Context. Topic Vocabulary- Working and Earning. Այնքան, այնպիսի, չափազանց և բավականին քերականական բառերը անգլերենում: Նյութի ընթերցում, թարգմանում, մասնագիտական բառապաշարի ուսումնասիրություն:

Թեմա 22' Grammar: Comparatives and Superlatives. The Short Story. Prepositional Phrases, Word Formation, Word Patterns. Ածականների և մակբայերի համեմատության աստիճանները: Քերականական վարժություններ: Նյութի ընթերցում, թարգմանում, մասնագիտական բառապաշարի ուսումնասիրություն:

Թեմա 23' Test. **Թեմա 24**' Presentation **Թեմա 25**' Grammar: Conditionals 1 (zero, first, second) The Drama Topic Vocabulary- Body and Lifestyle. Պայմանական նախադասությունը անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար: Տեքստի ընթերցում, թարգմանում, քննարկում: Բառապաշարի ուսումնասիրություն: **Թեմա 26**' Grammar: Conditionals 2 (third) The Poetry Prepositional Phrases, Word Formation, Word Patterns. Պայմանական նախադասությունը անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար: Նյութի ընթերցում, թարգմանում, մասնագիտական բառապաշարի ուսումնասիրություն:

Թեմա 27' Grammar: Reported Speech. Psycholinguistics. Topic Vocabulary- Creating and Building Անուղղակի խոսքը անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար:

Բառապաշարի ուսումնասիրություն, բառակազմություն, տեքստի թարգմանում, քննարկում:

Թեմա 28' Grammar: Reported Questions, Orders, Requests. The Newspaper. Prepositional Phrases, Word Formation, Word Patterns. Անուղղակի հարցեր, հրամաններ, խնդրանքները անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար: Տեքստի ընթերցում, թարգմանում, մասնագիտական տերմինների, բառերի և արտահայտությունների ուսումնասիրություն:

Թեմա 29' Grammar: Direct and Indirect Objects. Point of View. Topic Vocabulary- Nature and the Universe

Ուղիղ և անուղղակի խնդիրը անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար: Նյութի ընթերցում, թարգմանում, մասնագիտական բառապաշարի ուսումնասիրություն:

Թեմա 30' Grammar: Wish. Theme. Prepositional Phrases, Word Formation, Word Patterns

Ցանկանալ բայի գործածությունը անգլերենում, քերականական վարժություններ նյութը ամրապնդելու համար: Տեքստի ընթերցում, թարգմանում, մասնագիտական տերմինների, բառերի և արտահայտությունների ուսումնասիրություն:

Թեմա 31 Presentation. **Թեմա 32** Final Test.

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:

Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

Տիրապետելիքի ծրագրի պարտադիր դասընթացներ

19/M02. Հայոց լեզվի տեսություն (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը. Առարկայի նպատակն է մագիստրոսի հաղորդել համակարգային գիտելիքներ ժամանակակից հայերենի տեսական տարբեր ուսումնասիրությունների, քերականական կարգերի ըմբռնման, դասակարգումների աստիճանական ճշգրտման վերաբերյալ, պարզաբանել քերականական միավորների կազմության, կիրառության օրինաչափությունները և առանձնահատկությունները, դրանց ներակարգակային իրացումները և միջմակարդակային հարաբերությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիրանա ժամանակակից հայերենի տեսական տարբեր ուսումնասիրություններ:

2. կհասկանա քերականական միավորների կազմությունը:

3. կկարողանա կատարել հայերենի տեսական տարբեր ուսումնասիրություններ;

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Աշխարհաբարի ուսումնասիրությունը Ստ. Պալասանյանի աշխատություններում (աշխարհաբարի մշակման սկզբունքները, խոսքի մասերի դասակարգման առանձնահատկությունները, իմաստային-տրամաբանական հատկանիշները): **Թեմա 2**՝ Աշխարհաբարի տեսությունը Ա. Այտրնյանի քերականության մեջ (քերականական ըմբռնումները, գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության հարցը, աշխարհաբարի գնահատումը որպես գրական լեզու):

Թեմա 3՝ Մ. Աբեղյանի հայոց լեզվի տեսությունը (քերականական կարգերի նորովի մեկնաբանումը, դրանց աստիճանական հստակեցումը, խոսքի մասերի դասակարգման առանձնահատկությունները, իմաստաբանական-շարահյուսական սկզբունքները):

Թեմա 4՝ Հայերենի քերականության իմացաբանական տեսությունը. Գ. Սևակ (խոսքի մասերի տեսության համակարգային վերանայման փորձը, լեզվական կարգերի ուսմունքը, քերականության իմացաբանական ըմբռնումն ու կիրառված սկզբունքները): **Թեմա 5**՝ Քերականական կարգերը Հր. Աճառյանի աշխատություններում (քերականության քնությունը պատմական և տեսական հայեցակետերից, բառերի տեսակների որոշման չափանիշները, խոսքի մասերի շարահյուսական արժեքը և դրանց դասակարգման առանձնահատկությունները):

Թեմա 6՝ Հայերենի քերականությունը Ս. Աբրահամյանի ուսումնասիրություններում (դերանվան և չթեքվող խոսքի մասերի նկարագրությունը, քերականական ըմբռնումները, խոսքի մասերի դասակարգման աստիճանական եղանակը): **Թեմա 7՝** Էդ. Աղայանի քերականության տեսությունը (հիմնական բառակարգերն՝ ըստ ելակետային հատկանիշների, ձևաբանության համակողմանի քննության փորձ, խոսքի մասերի բազմահատկանիշ, աստիճանական դասակարգումը): **Թեմա 8՝** Գ. Ջահուկյանի ժամանակակից հայերենի տեսությունը (խոսքի մասերի դասակարգումը, անվանական և դերանվանական հոլովում, բայական և ստորոգական կարգեր, գոյականական բառակապակցություն՝ որոշիչ բառեր և բառախմբեր, որոշչային բառակապակցությունների տեսակները, մակորոշիչ, հարաբերիչ բառեր և բառախմբեր, բայական բառակապակցություն և նախադասություն՝ շարույթ, եղանականիշ բառեր և բառախմբեր, ենթակա, ստորոգյալ, լրացական անդամներ, հարաբերիչ բառեր և բառախմբեր, բայերի կապակցելիության դասակարգումը, խոսքի մասերի փոխակերպում և փոխանցում, նախադասության փոխակերպում, ստորադասական կապակցություն, հարաբերական նախադասության տեսակները, դերբայական դարձված):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

19/M03. Գրականության տեսություն (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը. Այն հնարավորություն է ընձեռնում խորապես տիրապետել գրականության մեթոդներին /կլասիցիզմ, սենտիմենտալիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, նատուրալիզմ, էքզիստենցիալիզմ, սիմվոլիզմ/: Բացատրվում է թե ինչ են իրենից ներկայացվում գրական սեռերը, ժանրերը, ֆաբուլան, կոմպոզիցիան, տաղաչափությունը, գեղարվեստական միջոցները՝ պատկեր, միկրոպատկեր, սիմվոլ, գրական պայմանականություն, գեղարվեստական ժամանակ և տարածություն, գիտակցության հոսքեր՝ բազմակարծություն, գեղարվեստական ձև և բովանդակություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրոսը.

1. կիմանա այն օրենքներն ու օրինաչափությունները՝ համաձայն որոնց նախապատրաստվում է մագիստրոսին տիրապետել տեքստի յուրահատկություններին, հայտնաբերել հիմնական տեքստի ամբողջականությունն ու ավարտվածությունը:

2. կհասկանա գրականության մեթոդներին /կլասիցիզմ, սենտիմենտալիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, նատուրալիզմ, էքզիստենցիալիզմ, սիմվոլիզմ/: Կիմանա թե ինչ են իրենից ներկայացվում գրական սեռերը, ժանրերը, ֆաբուլան, կոմպոզիցիան, տաղաչափությունը, գեղարվեստական միջոցները՝ պատկեր, միկրոպատկեր, սիմվոլ, գրական պայմանականություն, գեղարվեստական ժամանակ և

տարածություն, գիտակցության հոսքեր՝ բազմակարծություն, գեղարվեստական ձև և բովանդակություն:

3. կկարողանա վերականգնել կանոնիկ տեքստը, որը հիմնական տեքստի վերջնական խմբագրությունն է, ծանոթագրել այն և ներկայացնել տպագրության:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրականություն և գրականագիտություն: Գեղարվեստական գրականության բնույթը:

Թեմա 2՝ Գեղարվեստական գրականության նշանակությունը: Գրականության պատմագործառական նշանակությունը: **Թեմա 3՝** Գրականության էսթետիկական բնույթը: Գրականության ազգային համամարդկային բնույթը: **Թեմա 4՝** Գրականության պատմության մեթոդական բնույթը: Հասարակություն, ժամանակ, գրականություն: **Թեմա 5՝** Գրականությունը և արվեստի մյուս տեսակները: Գրականությունը և հոգեբանությունը: Գրական երկի ընկալման հոգեբանություն: **Թեմա 6՝** Գեղարվեստական գրականության ներքին ոլորտը: Մեթոդ, հանգամանք, բնավորություն, հերոսի և հեղինակի կերպար: Գրական ժանրեր/ էպոս, դրամա, քնարերգություն/:

Թեմա 7՝ Գեղարվեստական պատկեր: Միֆը պատկերի համակարգում: **Թեմա 8՝** Միմվոլը գեղարվեստական գիտակցության մեջ: Ֆաբուլա, սյուժե, կոմպոզիցիա: Գեղարվեստական ժամանակ և տարածություն: **Թեմա 9՝** Գիտակցական ձև և բովանդակություն: Տաղաչափություն: **Թեմա 10** Գեղարվեստական ձև և բովանդակություն: **Թեմա 11՝** Վերլուծության նախնական փուլը: Գրական երկի բուն վերլուծությունը: **Թեմա 12՝** Գրական երկի գնահատման չափանիշները: Ստեղծագործական մեթոդները՝ կլասիցիզմ, սենտիմենտալիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, նատուրալիզմ, էքզիստենցիալիզմ, սիմվոլիզմ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

19/M04. Հայ ժողովրդական բանահյուսություն (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին ներկայացնել հայ ժողովրդական բանահյուսության բնույթն ու առանձնահատկությունները, ծանոթացնել ժանրային համակարգին ու պատկերավորման արվեստին, պատմության ու առասպելաբանության կապին ու փոխներթափանցմանը, բոլոր կարևոր ստեղծագործություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1.կիմանա

1.1 Բանահյուսության բնույթն ու առանձնահատկությունները

1.2 Ժանրային համակարգն ու պատկերավորման արվեստը

1.3 Պատմության ու առասպելաբանության կապն ու փոխներթափանցումը

1.4 Հայ ժողովրդական բանահյուսության բոլոր կարևոր ստեղծագործությունները

2. կկարողանա

2.1 Տարբերակել գրական ստեղծագործությունը բանահյուսական ստեղծագործությունից

2.2 Իրականացնել բանահավաքչական աշխատանքներ

2.3 Բնութագրել ցանկացած բանահյուսական աշխատանք

Մեկնաբանել բանահյուսություն երևույթն իր բոլոր դրսևորումներով

3. կտիրապետի

3.1. Բանահյուսության՝ որպես գիտության տեսական ու գործնական բոլոր նրբություններին:

Բովանդակությունը.

Բանահյուսությունը և նրա հատկանիշները:

Թեմա 1՝ Հայ բանահյուսության ժանրային համակարգը: **Թեմա 2՝** Բանահյուսության սեռերն ու հիմնական տեսակները. ա/ Վիպական սեռ բ/ Քնարական սեռ գ/ Դրամատիկական սեռ:

Թեմա 3՝ Բանահյուսության հիմնական ժանրերը կամ տեսակները: Նախնադարյան հմայություն, հմաօյական բանաձևեր: **Թեմա 4՝** Առասպել և առասպելաբանություն: ա/ Տարածածածամանակային հայեցակետերը

առասպելներում բ/ Հայ հին դիցարանն ու առասպելները գ/ Հայ հին առասպելաբանության հիմնական գծերը: **Թեմա 5՝** Ժողովրդական վեպ, նաև՝ դյուցազնավեպ, հերոսավեպ, վիպասանություն: Սասնա ծռեր: **Թեմա 6՝** Ժողովրդական հեքիաթներ: Առասպելի փոխարկումը հեքիաթի: Ավանդություններ և ավանդագրույցներ: **Թեմա 7՝** Առակ և անեկդոտ: **Թեմա 8՝** Վիպական երգեր: ա/ Նարեկացի բ/ Կարոս խաչօ վիպերգի մի միջնադարյան պատում գ/ Սուրբ Սարգիսը ժողովրդական բանավոր ավանդության մեջ: **Թեմա 9՝** Ժողովրդական երգեր: Ժողովրդական երգերի կիրառական խմբերը:

Թեմա 10՝ Ծիսական երգեր: Աշխատանքային երգեր: Պանդխտության երգեր: **Թեմա 11՝** Ռազմի և զինվորի երգեր: Բանտարկյալի կամ կալանավորի երգեր: **Թեմա 12՝** Միրո երգեր:

Ասույթաբանություն: Առած-ասացվածքներ: Հանելուկներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

19/M 05- Արտասահմանյան գրականություն XX-րդ դարի I կես (3 կրեդիտ)
Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնասիրել XX դարի I կեսի Ռուսաստանի գրականությունը և նրա զարգացման փուլերը:

Օանոթանալ գրական ժանրերի և ուղղությունների հետ:

Վերլուծել XX դարի I կեսի գրողների ստեղծագործությունները, բացահայտելով նրանց գրական արժեքները:

Ուսումնասիրել ռուս գրողների ստեղծագործական կյանքը և նրանց գրական կապը Հայաստանի հետ:

Էլեկտրոնային ռեսուրսների և միջոցների կիրառմամբ կատարել խմբային աշխատանքներ:

Մշակել և ներկայացնել անհատական աշխատանքների շնորհանդեսային տարբերակներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. **կիրմանա** XX դարի I կեսի Ռուսաստանի գրականությունը և նրա զարգացման փուլերը, գրական ժանրերը և ուղղությունները:
2. **կկարողանա** վերլուծել XX դարի I կեսի գրողների ստեղծագործությունները բացահայտելով նրանց գրական արժեքը:
3. **Կտիրապետի** Հայաստանի հետ ռուս գրողների ստեղծագործական և գրական կապերին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վ. Բրյուսովի ստեղծագործական կյանքը: Միմվոլիզմը որպես գրական ուղղություն: Բրյուսովի պատմվածքները: **Թեմա 2՝** Վ. Բրյուսովը և Հայաստանը: Բրյուսովի թարգմանությունները միջնադարյան հայ պոեզիայից: **Թեմա 3՝** Ա. Ախմատովայի ստեղծագործական կյանքը: Ա. Ախմատովայի բանաստեղծական ժողովածուները: Ա. Ախմատովան և Հայաստանը: **Թեմա 4՝** Ի. Բունինի ստեղծագործական կյանքը: Բունինի պատմվածքների ընդհանուր բնութագիրը: **Թեմա 5՝** Վ. Նաբոկովի ստեղծագործական կյանքը: Նաբոկովի պատմվածքները: **Թեմա 6՝** Վ. Նաբոկով. Լոլիտա. Գլխավոր հերոսների կերպարները: **Թեմա 7՝** Բ. Պաստերնակի բանաստեղծական ժողովածուները: Բ. Պաստերնակը որպես թարգմանիչ: **Թեմա 8՝** Ռեալիզմը Ա. Արբուզովի պիեսներում: («Հին Արբատի հեքիաթը», «Հիշողություն»): **Թեմա 9՝** Վ. Բուլգակովի պատմվածքները և վեպերը: «Վարպետը և Մարգարիտան» վեպը: **Թեմա 10՝** Ռ. Ռոժդեստվենսկու, Վ. Վոզնեսենսկու բանաստեղծական ժողովածուները: **Թեմա 11** Յու.Լևիտանսկու ստեղծագործական կյանքը: Լևիտանսկու բանաստեղծությունների ժողովածուների ընդհանուր բնութագիրը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

19/M06. Հայ գրականության շրջափուլեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը. Մագիստրանտներին խորապես ծանոթացնել ուսումնասիրվող առարկային, որը հիմնականում վերաբերվում է հին և միջնադարյան գրականությանը: Հատուկ ուշադրություն է դարձվում պատմագրության ներդիր ժանրերին՝ առասպել, ողբ, վարք, վկայաբանություն, թուղթ, երազ և տեսիլ, շարական:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** այն օրենքներն ու օրինաչափությունները՝ համաձայն որոնց նախապատրաստում է մագիստրոսին տիրապետել տպագրվող տեքստի յուրահատկություններին, հայտնաբերել հիմնական տեքստի ամբողջականությունն ու ավարտվածությունը:

2. **կհասկանա** գրական սեռերը, ժանրերը, ֆաբուլան :

3. **կկարողանա** վերագրել կանոնիկ տեքստերը, որը հիմնական տեքստի վերջնական խմբագրությունն է, ծանոթագրել այն և ներկայացնել տպագրության:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ասիակենտրոն և եվրակենտրոն մշակույթներ: Հայ հին գրականության հիմնական առանձնահատկությունները: **Թեմա 2՝** 5-րդ դարի գրականության ժանրերը: 5-րդ դարի պատմագրության համադրականությունը: **Թեմա 3՝** Բանահյուսական նյութերի և պատմական աղբյուրների օգտագործումը Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Պատումի յուրահատկությունը 5-րդ դարի պատմագրության մեջ:

Թեմա 4՝ Պատմական հերոսների դիմանկարների ստեղծման առանձնահատկությունները 5-րդ դարի պատմագրության մեջ: Ժամանակի դրսևորման ձևերը հայ և միջնադարյան պատմագրության մեջ:

Թեմա 5՝ Ողբի ժանրի առանձնահատկությունները հին և միջնադարյան գրականության մեջ: Էպիգմի քայքայումը 7-8-րդ դ.դ. պատմության մեջ /Սեբեոս/

Թեմա 6՝ 5-րդ դարի պատմագրության մեթոդի յուրահատկությունները: Էպիկական հերոսների կերպավորման սկզբունքները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ: **Թեմա 7՝** Հայ միջնադարյան տաղերի կապը հոգևոր երգերի և ժողովրդական խաղերի մեջ: Երկվության հերոսների կերպարավորման սկզբունքները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ: **Թեմա 8՝** Հոգու, մարմնի և շնչի փոխկապակցությունը միջնադարյան տաղագրության մեջ: Նարեկացու «Մատյան ողբերգության» և միջնադարյան պատմական ողբերի նմանությունները և տարբերությունները: Սուրբ գրային սիմվոլները Նարեկացու Մատյանում: **Թեմա 9՝** Նարեկացու Մատյանի կառուցվածքը: Աշուղական արվեստի յուրահատկությունները: Մայաթ-Նովա՝ տարեգրու երգահան, կատարող:

Թեմա 10՝ Խորենացու «Հայոց պատմության» կառուցվածքը: Վասակի կերպարը Եղիշեի և Ղազար Փարպեցու պատմագրական երկերում: Հայ փիլիսոփայական միտքը 5-րդ դարի գրականության մեջ:

